ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐᲐᲡᲢᲐᲜᲘ» (ᲡᲐᲥᲐᲠᲗᲕᲔᲚᲝ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 89 - 90 (16586) ՇԱԲԱԹ, 11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՏԵՍԱԿԵՏ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑՈՎ ՎՐԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՌԱՋԱՏԱՐՆ Է»



*Նոյեմբերի 10-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ «Վրաստանի բանկի» ներդրողների հետ:*

Հանդիպմանը վարչապետը նշեց, որ Վրաստանը կայուն ժողովրդավարության երկիր է, որտեղ ապահովված է օրենքի գերակայությունը, գործում է բաց շուկա եւ ներդրողների իրավունքները պաշտպանված են: Նրա խոսքով, երկրում էկոնոմիկան ազատականացված է, իսկ աշխարհաքաղաքական դիրքն ունի ռազմավարական նշանակություն:

Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ իր գլխավորած կառավարության համար գործարարության աջակցությունը գլխավոր առաջնահերթություններից է:

- Այդ ամենը ամրացված է տնտեսական կայուն աճով, ինստիտուցիոնալ կայունությամբ եւ բարեփոխումների լայնածավալ ծրագրերի իրականացման կառավարության պատրաստակամությամբ, ինչպես նաեւ կանխամշակված մակրոտնտեսական քաղաքականությամբ: Հպարտությամբ կարող եմ նշել, որ Վրաստանը տարածաշրջանում առաջատարներից մեկն է՝ իրականացված բարեփոխումների եւ դրանց արդյունքում ապահոված ձեռքբերումների տեսանկյունից: Բավական է նշել, որ 2017 թվականի ինը ամիսների տվյալներով, ՀՆԱ-ի միջին աճը կազմել է 4,7 տոկոս: Ներդրումային բազմաբնույթ բազան ապահովում է տնտեսական կայունություն եւ ստեղծում ներդրումների լայն հնարավորություններ,- հայտարարեց վարչապետը:

Հանդիպմանը Գիորգի Կվիրիկաշվիլին մանրամասն խոսեց կառավարության բարեփոխումների 4 կետից բաղկացած ծրագրի եւ երկրի միջազգային վարկանիշների մասին:

ԱՅՑ

# ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿ՝ ՎՐԱՑ-ԼԵՀԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

*Նոյեմբերի 8-10-ը Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին պաշտոնական այցով գտնվում էր Լեհաստանում:*



Լեհաստանի նախագահի նստավայրում, դիմավորման պաշտոնական արարողությունից հետո, անցկացվեց Վրաստանի եւ Լեհաստանի նախագահներ Գիորգի Մարգվելաշվիլու եւ Անջեյ Դուդայի առանձնազրույցը, որից հետո բանակցությունները շարունակվեցին ընդլայնված կազմով:

Կողմերն ընդգծեցին, որ Վրաստանի նախագահի ներկայիս այցը նոր մակարդակ կբարձրացնի վրաց-լեհական հարաբերությունները: Բանակցություններին առանձնակի ուշադրություն հատկացվեց տնտեսական, կրթական, մշակութային ոլորտներում համագործակցության խորացման հարցերին, ընդգծվեց համատեղ կրթական ծրագրերի ակտիվացման անհրաժեշտությունը:

Բանակցություններում անդրադարձ կատարվեց Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՆՈՒՄ ԵՆ ԱԿՏԻՎ ԵՎ ԴԻՆԱՄԻԿ

*Նոյեմբերի 9-ին Հայաստանի վարչապետը հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Վրաստանի մրցակցային գործակալության նախագահ Նոդար Խադուրիու հետ:*



Հանդիպմանը Կարեն Կարապետյանը նշեց, որ հայ-վրացական բարեկամական հարաբերությունները կարելի է բնորոշել՝ որպես բարձր մակարդակի ու դինամիկ զարգացող, եւ պետք է շարունակել բազմոլորտ գործակցության է՛լ ավելի ընդլայնմանն ուղղված համատեղ ջանքերը, այդ թվում՝ առեւտրատնտեսական կապերի զարգացման ուղղությամբ: Կարեն Կարապետյանը ողջունեց Հայաստանի տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի եւ Վրաստանի մրցակցային գործակալության միջեւ Փոխըմբռնման հուշագրի ստորագրումը, որի նպատակը մրցակցության քաղաքականության եւ մրցակցային օրենսդրության կիրառման ոլորտում երկու երկրների միջեւ փոխգործակցության խթանումն ու ամրապնդումն է:

Հանդիպմանը զրուցակիցները մտքեր փոխանակեցին Վրաստանի եւ Հայաստանի ընկերությունների համար երկու երկրներում հավասար մրցակցային միջավայրի ապահովման եւ մրցակցային խնդրոտների համատեղ ուսումնասիրության հարցերի շուրջ: Այս համատեքստում կարեւորվեց կոնկրետ ապրանքային շուկաներում գնագոյացման առանձնահատկությունների վերհանումն ու համապատասխան ուսումնասիրությունների անցկացումը:

Մինչ այդ, Վրաստանի մրցակցային գործակալության նախագահ Նոդար Խադուրին եւ Հայաստանի տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանը, ստորագրեցին փոխադարձ համաձայնության եւ փոխըմբռնման հուշագիր:

Ըստ դրա, Վրաստանի եւ Հայաստանի բոլոր ներդրումային ընկերությունները լիարժեք աջակցություն կստանան երկու երկրների մրցակցային մարմինների կողմից: Հուշագիրը նախատեսում է նաեւ տնտեսական մրցակցության ոլորտում երկկողմ հավասար եւ փոխշահավետ համագործակցության ապահովում:

Հանդիպմանը կողմերը կարեւորեցին մրցակցային բարենպաստ միջավայրի որոշիչ դերը տնտեսության զարգացման գոր-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

# ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ԱՅԼ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՉՀԱՆԳԵՑՆԻ ՎՐԱՑԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՉԵՂԱՐԿՄԱՆԸ»



*Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն սահմանադրական նոր փոփոխությունների առաջիկա համաժողովրդական քննարկումների կապակցությամբ Հանրային հեռուստաալիքին տված հարցազրույցում անդրադարձել է սահմանադրական առանձին փոփոխությունների:*

Մասնավորապես, նրա խոսքով, սահմանադրության նոր խմբակցությունում ազատական մոտեցում է ցուցաբերվում Վրաստանի քաղաքացիության հարցում:

- Մենք առաջարկել ենք ազատական նոր մոտեցում: Այլ երկրի քաղաքացիության ընդունումը չի նշանակում վրացական քաղաքացիության չեղարկում: Դա մեծ նշանակություն ունի մեր հայրենակիցների եւ մեր այն համայնքի համար, որը գտնվում է արտասահմանում: Դա կարեւոր է մեր այն հայրենակիցների համար, ովքեր վախենում են կորցնել Վրաստանի քաղաքացիությունը,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

Խոսելով բոնուսային համակարգի մասին, Իրակլի Կոբախիձեն նշեց, որ դա սահմանադրության կարեւորագույն տարրն էր, որը հավասարակշռում էր համակարգը, թեպետ սահմանադրական նոր նախագծում գերադասությունը տվեց փոխզիջողական քաղաքականությանը՝ հաշվի առնելով Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականը: Խորհրդարանի խոսնակի խոսքով, բոնուսի համակարգի վերացումը

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

# ՍՏԵՂԾՎԵԼ Է ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

*Ստեղծվել է սահմանադրական փոփոխությունների համաժողովրդական քննարկման հանձնաժողովը:*




Վրաստանի սահմանադրությունում կատարված փոփոխությունները կքննարկվեն երկրի սոցիալական տարբեր խմբերում: Քննարկմանը կմասնակցեն նաեւ փորձագետները, կոնստիտուցիոնալիստներն ու ոչ կառավարական հատվածի ներկայացուցիչները, որից հետո փոփոխությունների նախագիծը կներկայացվի խորհրդարանի հաստատմանը:

Ներկա դրությամբ, հայտնի է, որ սահմանադրական փոփոխությունների քննարկմանը, խորհրդարանական մեծամասնությունից բացի, կմասնակցի միայն Վրաստանի հայրենասերների այանսը: Քննարկման գործընթացին մասնակցությունից հրաժարվել են «Ազգային շարժումը» եւ «Եվրոպական Վրաստանը»:

- Հանձնաժողովը կազմակերպելու է համաժողովրդական քննարկում: Մեկ ամիս անց, կհանրագումարենք քննարկման արդյունքներն ու կընդունենք սահմանադրական նոր փոփոխությունների նախաձեռնած օրինանախագիծը,- հայտարարեց խորհրդարանական մեծամասնության ներկայացուցիչ Մամուկա Մդինարաձեն:

ՀՈԲԵԼՅԱՆ

# ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԱՆԵՆՔ ՀՆԱՐԱՎՈՐԸ, ՈՐՊԵՍԶԻ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ ԴԱՌՆԱ ԱՅՆՊԻՍԻՆ, ՈՐՊԻՍԻՆ ԵՐԱԶՈՒՄ ԷՐ ԻԼԻԱՆ»

*Նոյեմբերի 8-ին Վրաստանը նշեց վրաց գրող, հասարակական գործիչ Իլիա Ճավճավաձեի ծննդյան 180-ամյակը: Հոբելյանական հանդիսությունները անցկացվեցին Թբիլիսիում, Սագուրամոյում եւ Ղվարելիում:*




Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, կառավարության հերթական նիստում երկրի բնակչությանը շնորհավորեց Իլիա Ճավճավաձեի ծննդյան 180-ամյակի առթիվ եւ հայտարարեց, որ հնարավոր ամեն ինչ պետք է արվի, որ մեր երկիրը դառնա այնպիսին, որպիսին երազում էր Իլիան:

- Հոբելյանական միջոցառումները կանցկացվեն «Իլիան մեր ժամանակակիցն է» կարգախոսով, եւ այս բառերը իրականում ներկայացնում են այդ մեծ գործչի մասշտաբայնությունը, քանի որ գոյություն չունի արդի թեկուզ որեւէ ազգային հիմնախնդիր, որի լուծումը հնարավոր չէ կարդալ Ճավճավաձեի գործերում,- հայտարարեց վարչապետը:

Վրաստանի վարչապետի նախաձեռնությամբ հոբելյանական միջոցառումները հիմնականում անցկացվեցին Սագուրամոյում, գրողի տուն-թանգարանում:

ԱՅՑ

# ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿ՝ ՎՐԱՑ-ԼԵՀԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յան կառույցներին ինտեգրման գործընթացին: Այդ ենթատեքստում կողմերը տեղեկատվություն փոխանակեցին Արեւելյան գործընկերության եւ ՆԱՏՕ-ի առաջիկա գագաթաժողովների նախապատրաստման մասին: Լեհաստանը կրկին հավաստիացրեց իր դիրքորոշումը Վրաստանի տարածքային ամբողջականության եւ երկրի եվրանտլանտյան ինտեգրման միտումների աջակցության հարցում:

Բանակցությունների ավարտից հետո, երկու երկրների նախագահները հանդես եկան համատեղ հայտարարությամբ:

Լեհաստան կատարած այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպումներ ունեցավ նաեւ Լեհաստանի վարչապետ Բեատա Շիդլոյի, սեյմի մարշալ Մարեկ Կուխչինսկու, սենատի մարշալ Ստանիսլավ Կարչեւսկու հետ, մասնակցեց անվտանգության հարցերով Վարշավայում անցկացված գագաթաժողովի աշխատանքին:

Վրաստանի նախագահի գլխավորած պաշտոնական պատվիրակության կազմում էին նախագահի աշխատակազմի ղեկավար Գիորգի Աբաշիշվիլին, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Դավիթ Ռաքվիաշվիլին, ԱԳ փոխնախարար Վախթանգ Մախարոբելիշվիլին, պաշտոնական այլ անձինք:

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

Հոկտեմբերի 21-ի տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքներով, 66 ընտրատարածքներում հայտարարվեց ընտրությունների երկրորդ փուլ, քանի որ քաղաքապետի թեկնածուներից եւ ոչ մեկին չէր հաջողվել ստանալ ձայների 50 եւ ավելի տոկոսը: Մասնավորապես, ինքնակառավարման Քութայիսի քաղաքում եւ ինքնակառավարման Ղազբեգիի, Խաշուրիի, Բորժոմիի, Օզուրգեթիի եւ Մարտվելիի մունիցիպալիտետներում նոյեմբերի 12-ին կանցկացվի քաղաքապետի ընտրությունների երկրորդ փուլը:

# ՆՈՐԸՆՏԻՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԸ ՊԱՇՏՈՆԸ ԿՍՏԱՆՁՆԵՆ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-ԻՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 21-ին անցկացված տեղական ինքնակառավարման ընտրությունների առաջին փուլում, 64 քաղաքապետից 58-ը ստացան ձայների մեծամասնությունը: Արդեն ընտրված քաղաքապետերը, ընտրական օրենսդրության համաձայն (ընտրությունների հանրագումարային արդյունքների հրապարակումից 11-րդ օրը), նոյեմբերի 12-ին ձեռնամուխ են լինելու պաշտոնական պարտականությունների կատարմանը:

Ինչ վերաբերում է մունիցիպալային նորընտիր սակրեբուլոների անդրանիկ նիստին, ապա այն կանցկացվի նոյեմբերի 14-ին:

# ԿԸՀ ՉԲԱՎԱՐԱՐԵՑ ՔՎԵՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎՄԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԸ




Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը չբավարարեց խորհրդարանական եւ ոչ խորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունների՝ տեղական ինքնակառավարման ընտրությունների հանրագումարային արձանագրությունների չեղարկման եւ քվեների վերահաշվման մասին պահանջը:

Ինչպես հայտարարեց ԿԸՀ նախագահ Թամար Ժվանիան, գոյություն չունի փաստական եւ իրավական որեւէ հանգամանք, որը կարող էր հիմք ծառայել արձանագրությունների չեղարկման եւ ընտրությունների արդյունքների վերացման համար:

# ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՓՈԽՎՈՒՄ Է

Մոտ ժամանակներում, Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կկազմավորվի նոր կարգով:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության վերջնական արդյունքների հրապարակումից հետո, ուժի մեջ է մտել խորհրդարանի կողմից ընդունած նոր օրենք, ըստ որի, ընտրական վարչակազմում կուսակցությունների ներկայացուցիչների քանակը անմիջականորեն առնչվում է խորհրդարանական վերջին ընտրություններում նրանց արդյունքներին: Դա նշանակում է, որ բոլոր մակարդակների հանձնաժողովներում իրենց ներկայացուցիչները կունենան միայն այն սուբյեկտները, ովքեր ստացել են խորհրդարանական մանդատներ ու կազմել խմբակցություններ:

Միաժամանակ, ինչպես ԿԸՀ-ում, այնպես էլ՝ մյուս հանձնաժողովներում կուսակցությունների ներկայացուցիչների թիվը յոթից հասցվել է վեցի: Այդ վեց ներկայացուցիչներից ԿԸՀ կազմում երեքը կունենա «Վրացական երազանք» կուսակցությունը, մեկական ներկայացուցիչ՝ «Ազգային շարժումը», «Եվրոպական Վրաստանը» եւ «Հայրենասերների ալյանսը»:



ԱՄՆ

## ՀԵՐԹԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ՝ ԶՈՀԵՐՈՎ

*Նոյեմբերի 5-ի ողբերգական հետեւանքներ ունեցած հրաձգության հերթական դեպքը ցնցել է ԱՄՆ-ը. Տեխասի եկեղեցում կատարված սպանդի հետեւանքով, զոհվել է 26 մարդ, ավելի քան 20 հոգի վիրավոր է: Տուժածները 5-ից մինչեւ 72 տարեկան են: Կրակողին մեռած են գտել, բայց ոստիկանությունն առայժմ չգիտի նրա մահվան հանգամանքները: Հանցագործության դրդապատճառները նույնպես առայժմ պարզ չեն:*

ԳԵՐՄԱՆԻԱ

## ԿԳՐԱՆՑՎԻ «ԵՐՐՈՐԴ ՍԵՌԸ»

*Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանը թույլատրել է «երրորդ սեռ» նշել Քաղաքացիական կացության ակտերի գրանցումներում (ՔԱԳՍ): Այդ մասին հաղորդվում է դատարանի կայքում զետեղված որոշման մեջ:*

*«Անձի ընդհանուր իրավունքը նաեւ պաշտպանում է նրանց սեռական նույնականությունը, ովքեր երկար ժամանակ չեն կարողանում իրենց դասել ո՛չ արական, ո՛չ էլ իգական սեռին»,- ասված է դատարանի վճռում: Նոր օրենսդրական նորմաները պետք է ստեղծվեն մինչեւ 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:*

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՍԻԱ

## ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԸ

*ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը տիկնոջ՝ Մելանիայի ուղեկցությամբ, 10-օրյա ուղեւորություն է իրականացնում Արեւելյան Ասիայի մի շարք երկրներ: Մասնավորապես, ԱՄՆ նախագահը այցելել է Հարավային Կորեայի Հանրապետություն, Չինաստան, Ճապոնիա: Տարածաշրջանի երկրների ղեկավարների հետ, ԱՄՆ ղեկավարը քննարկել է ԿԺԴՀ-ի միջուկային ծրագրից մինչեւ երկկողմ առեւտրին վերաբերող հարցեր:*

*Բացի վերոնշյալ այցելություններից, 10-օրյա ուղեւորության ծրագրով նա կմասնակցի Ասիախաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության անդամների բարձր մակարդակի հանդիպմանը Վիետնամի Դանանգ քաղաքում, ինչպես եւ Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայում՝ Հարավարեւելյան Ասիայի պետությունների ասոցիացիայի եւ Արեւելաասիական գագաթաժողովներին:*

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՆՈՒՄ ԵՆ ԱԿՏԻՎ ԵՎ ԴԻՆԱՄԻԿ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ծում: Նրանք նախանշեցին այն հիմնական ուղղությունները, որոնք հանդիսանալու են առաջիկա նոր համագործակցության հիմք:

- Հայ-վրացական առեւտրատնտեսական հարաբերությունները մշտապես զարգացել են ակտիվ ու դինամիկ: Այսօր մեր երկրում գործում է վրացական կապիտալի մասնակցությամբ ավելի քան 300 ընկերություն: Հուրախություն մեզ, բավականին մեծ է նաեւ հայկական ընկերությունների ներկայացվածությունը Վրաստանում, իսկ հատկապես վերջին տարիներին առանձնապես ավելացել է նոր ընկերությունների մուտքը: Այդ իսկ պատճառով, այսօր մենք առանձնակի կարեւորում ենք բարենպաստ տնտեսական միջավայրի զարգացումը՝ փոխադարձ մրցակցային հավասար եւ բարեխիղճ պայմանների առկայությամբ,- նշեց Արտակ Շաբոյանը եւ հավելեց.- Քանի որ Հայաստանը ներմուծող ապրանքների զգալի մասը ներկրում է հենց Վրաստանի տարածքով, ապա մեզ համար շատ կարեւոր է մի շարք ապրանքային շուկաների գնագոյացման վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության ստացումը՝ գերիշխող ապրանքային շուկաներում ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով:

Իր հերթին, Նոդար Խադուրին նշեց, որ ստորագրված հուշագիրը ավելի կխորացնի եւ կամրապնդի արդեն իսկ ձեւավորված համագործակցությունը:

- Վստահ եմ, որ մեր երկրների միջեւ արդեն իսկ ձեւավորված հարաբերությունները, ինչպես նաեւ այսօր ստորագրված հուշագիրը կնպաստեն տնտեսական մրցակցության բնագավառում համագործակցության է՛լ ավելի խորացմանը՝ համատեղ գործառույթների իրականացման, տեղեկատվության փոխանակման եւ շատ այլ առումներով,- շեշտեց Նոդար Խադուրին:



# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

## ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ԱՅԼ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՉՀԱՆԳԵՑՆԻ ՎՐԱՑԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՉԵՂԱՐԿՄԱՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

երկրում ավելացնում է ռիսկի մակարդակը եւ նման պայմաններում ավելանում է նաեւ յուրաքանչյուր քաղաքական գործչի պատասխանատվությունը:

- Մեզանում լուրջ մարտահրավերներ են բոնուսային համակարգի վերացման առումով: Դրա հստակ օրինակը Նիդերլանդներն են, որտեղ 2298 օրվա ընթացքում չի հաջողվում ձեւավորել կառավարությունը: Պատկերացրեք, եթե նույնը տեղի ունենա Վրաստանում: Բոնուսի նպատակը նման զարգացումների կանխումն է: Ռիսկը մեծացել է, թեեւ Վենետիկի հանձնաժողովի համաձայնությամբ բոնուսային համակարգը վերացրել ենք: Դա զգալիորեն ավելացնում է յուրաքանչյուր քաղաքական գործչի պատասխանատվությունը: Հաջորդ յոթ տարիներին մենք մտածելու ենք քաղաքական մեր համակարգի կատարելագործման մասին: Այսօր մեր քաղաքական համակարգը լուրջ զարգացման կարիք ունի, հակառակ դեպքում, մենք ռիսկերից խուսափել չենք կարողանա,- ընդգծեց Իրակլի Կոբախիձեն:

Հարցազրույցում խորհրդարանի նախագահն անդրադարձել է նաեւ կառավարության գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության թեմային: Նրա խոսքով, իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը, ավանդաբար, թույլ է.

- Կառավարության վերահսկողությունը մեր պարտականությունն է: Խորհրդարանը ավանդաբար թույլ է իշխանության վերահսկողության հարցում: Անհրաժեշտ է սերտացնել օրենսդրական եւ գործադիր իշխանությունների միջեւ կապերը,- ընդգծել է Իրակլի Կոբախիձեն:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ

## ԱՎԱՐՏՎԵՑ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

***ՄԱԿ-ի՝ պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO), Վրաստանի մասշտաբով, ավարտեց անասունների նույնականացման-գրանցման ծրագրով (NAITS) ու նոր կարգավորումների վերաբերյալ տեղեկատվական հանդիպումների անցկացումը:***

NAITS

ცხოველთა რეგისტრაციის ეროვნული სისტემა

Ինչպես պարզաբանեցին կազմակերպությունում, հունվարի 1-ից սպանդանոցները չեն սպասարկի այն ֆերմերներին, որոնց անասունները չեն ունենա ականջանշաններ:

Վերոնշյալ հանդիպումներում, կազմակերպության եւ Վրաստանի պարենի ազգային գործակալության ներկայացուցիչները մասնակիցներին ներկայացրին անասունների գրանցման-նույնականացման նոր, բարելավված պայմանակարգի գործողության ծրագիրը: Ըստ ծրագրի, կշարունակվի խոշոր եւ մանր եղջերավոր անասունների գրանցումը, կբարելավվի ու կկատարելագործվի տվյալների էլեկտրոնային բազան: Այն թույլ կտա կարճ ժամանակահատվածում անասունների մասին մանրամասն տեղեկատվություն ստանալ:

NAITS-ի ծրագրի իրականացման համար, Շվեյցարիայի զարգացման ու համագործակցության եւ Ավստրիայի զարգացման գործակալությունները, ընդհանուր առմամբ, հատկացրել էին 5 միլիոն դոլար:

ՈԼՈՐՏ

## ԿԱՐՏՈՖԻԼԻ ԳՆԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ Է ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԱՎԵԼԱՑՄԱՄԲ

***Ինչպես հայտարարեց Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունը, արտաքին եւ ներքին շուկայում վրացական կարտոֆիլի նկատմամբ բարձր պահանջարկը հանգեցրեց այդ մթերքի գնի կրկնապատկման:***

Երկրում կարտոֆիլի արտադրության նշանակալի մասը բաժին է ընկնում Սամցխե-Ջավախեթիի երկրամասին, որտեղ աճեցվում է մթերքի ընդհանուր քանակի շուրջ 64 տոկոսը: Թեպետ, նախարարության տվյալներով, կարտոֆիլի աճեցման ծավալների ավելացման միտումը վերջին տարիներին վավերացվել է նաեւ մյուս տարածաշրջաններում:

Այս տարի ֆերմերները հավաքել են կարտոֆիլի հարուստ բերք, ինչը թույլ է տվել նկատելիորեն ավելացնել հարեւան երկրներ իրականացվող արտահանման ծավալները: 2017 թվականին վրացական կարտոֆիլի արտահանված ծավալը գերազանցել է 35 հազար տոննան, ինչը 5 անգամ գերազանցում է 2016 թվականի ցուցանիշը:

Ինչպես նշեցին գերատեսչությունում, կարտոֆիլի պահանջարկի ավելացումը հանգեցրել է գնի ավելացման, ինչը ֆերմերներին թույլ է տալիս զգալիորեն ավելացնել եկամուտները:



### ԳԻՈՐԳԻ ԱԼԻԲԵԳԱՇՎԻԼԻՆ ԿԳԼԽԱՎՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԸ



*Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու որոշմամբ, Թբիլիսիի հինգերորդ գումարման սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին կգլխավորի պետական լեզվի դեպարտամենտը:*

*Ինչպես տեղեկացրել է կառավարության մամլո ծառայությունը, պետական լեզվի մասին օրենքի համաձայն, դեպարտամենտի նախագահը պարտավոր է ձեւավորել դեպարտամենտի կառուցվածքը, մշակել գերատեսչության հիմնադրույթները: Կառուցվածքի ձեւավորումից եւ դրա հաստատումից հետո, նախագահը ձեռնամուխ է լինելու աշխատակիցների ընտրությանը:*

### ԱՌԱՆՑ ՏՈՄՍԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՈՒԳԱՆՔԸ ՔԱՌԱՊԱՏԿՎՈՒՄ Է

*Հասարակական տրանսպորտով առանց տոմսի ուղեւորության տուգանքը 5 լարիից հասցվում է 20 լարիի:*

*Ընդունված օրենքում նաեւ նշված է, որ ուղեւորը ուղեւորավարձը մուծելու է հասարակական տրանսպորտ մուտք գործելուց անմիջապես հետո:*

*Համապատասխան փոփոխությունը ներառվել է վարչական իրավախախտումների օրենսգրքում:*

### ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ (10 նոյեմբերի)

*Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2.620 | 2.690 |
| ԵՎՐՈ | 3.025 | 3.157 |
| ՌՈՒԲԼԻ | 0.042 | 0.048 |
| ԴՐԱՄ | 0.0041 | 0.0059 |

*Նոյեմբերի 3-ի համեմատ, դոլարի կուրսը ավելացել է 0,025 լարիով:*

შემოსავლების სამსახური

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

### ԱՊՕՐԻՆԻ ԱՆՏԱՌԱՆՅՈՒԹ

Հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 3-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի դեպարտամենտի աշխատակիցները, երկրի մասշտաբով իրականացված ապրանքային վերահսկողության նպատակով անցկացված միջոցառումների արդյունքում, բացահայտեցին արդյունաբերական գործունեության համար նախատեսված, առանց փաստաթղթերի 11,01 խորանարդ մետր անտառանյութի տարանցման փաստ: Փորձագիտության եզրակացությամբ, առանց փաստաթղթերի տարանցման ենթակա անտառանյութի շուկայական գինը կազմում է 6501,3 լարի: Ձեւակերպվել են իրավախախտման համապատասխան արձանագրություններ: Վրաստանի հարկային օրենսգրքի 286 հոդվածի համաձայն, որպես պատժամիջոց, սահմանվել է դրամական տուգանք եւ ապօրինի ապրանքի առգրավում:

### ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ 909 ՓԱՍՏ

Հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի դեպարտամենտի կողմից երկրի ողջ մասշտաբով անցկացված ընթացիկ վերահսկողության միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային իրավախախտման 909 փաստ: Մասնավորապես, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի դեպարտամենտի աշխատակիցների կողմից ստուգման է ենթարկվել տարանցող 3340 բեռ: Ստուգման արդյունքում, վավերացվել են հետեւյալ իրավախախտումները. առանց ապրանքագրերի բեռների փոխադրման՝ 161, տնտեսական գործունեության համար հարկատուի կողմից Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգի խախտման՝ 822, առանց գանձարկղային սարքի օգտագործման սպառողների հետ կանխիկ դրամով հաշիվ-հաշվարկման՝ 660 դեպք:

### ՄԱՔՍԱՆԵՆԳԱՅԻՆ ՍԻԳԱՐԵՏ

Նոյեմբերի 4-ին, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի դեպարտամենտի՝ Սամեգրելոյի, Գուրիայի եւ Զեմո Սվանեթիի բաժինների աշխատակիցները, Զուգդիդիի շրջանի Ռուխի գյուղում անցկացրած վերահսկիչ միջոցառումների արդյունքում, հայտնաբերել են պարտադիր աքցիզավորման ենթակա, բայց առանց աքցիզի սիգարետ, ընդհանուր առմամբ, 4740 տուփ:

Վրաստանի հարկային օրենսգրքի 1922 հոդվածի 5-րդ մասի համաձայն, իրավախախտներից ապրանքը առգրավվել է: Գործի նյութերը, Վրաստանի վարչական իրավախախտումների օրենսգրքի 241 հոդվածի համաձայն, առաքվել են դատարան:

### ՉՀՌՉԱԿԱԳՐՎԱԾ ՈՍԿԻ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

Նոյեմբերի 6-ին, «Թբիլիսիի օդանավակայան» մաքսակետում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցների կողմից հայտնաբերվել է ապօրինի երկրի տարածք չհռչակագրված ոսկու զարդեր ներբերելու 4 դեպք: Հայաստանի քաղաքացիներ Լ.Պ.-ն, Ա.Գ.-ն եւ Գ.Գ.-ն սահմանակետով ապօրինաբար անցկացնում էին չհռչակագրված ոսկե զարդեր (ընդհանուր՝ 399,65 գրամ):

Ապրանքի ընդհանուր մաքսային արժեքը կազմում է 26 063,87 լարի: Հարկային օրենսգրքի 289 հոդվածի 10-րդ մասի համաձայն, իրավախախտներին սահմանվել է դրամական տուգանք՝ 226 063,87 լարի գումարով:

### ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐ՝ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ RS CAR ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՎ

Նոյեմբերի 3-30-ը, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության շարժական RS CAR կենտրոնները, հարկատուներին 30 լոկացիաներում կմատուցեն սպասարկումներ այն երկրամասերի բնակիչներին, որտեղ եկամուտների ծառայության սերվիս-կենտրոնները տարածված չեն: RS CAR կենտրոնները (միկրոավտոբուսները) հագեցված են եկամուտների ծառայության սերվիս-կենտրոններում գործող տեխնիկական միջոցներով: Հարկատուներին հնարավորություն է ընձեռվում՝ իրենց հարկման ժամանակահատվածում եւ վայրում կամ բնակավայրերում, ժամանակին ստանալ անհրաժեշտ սպասարկումներ:

***Ըստ երկրամասերի սպասարկման, RS CAR կենտրոնները կգործեն. Թեթրիծղարոյում՝ նոյեմբերի 14-ին ժամը 10:00-17:00-ը, շրջկենտրոնի վարչության շենքի հարակից տարածքում, Նինոծմինդայում՝ նոյեմբերի 21-ին, ժամը 10:00- 17:00-ը, շրջկենտրոնի վարչության շենքի հարակից տարածքում (Պուշկինի փողոց), Ասպինձայում՝ նոյեմբերի 22-ին, ժամը 10:00-17:00-ը, տեղի TBC բանկի մասնաճյուղի հարակից տարածքում (Թամար թագուհու փողոց):***

***ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ***

ՖԻՆԱՆՍՆԵՐ

# 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ՄԻՆՉԵՎ ՏԱՐԵՎԵՐՋ

## ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ԿԱՎԵԼԱՑՎԻ 2019 ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

***Վրաստանի ֆինանսների նախարարությունը մինչեւ տարեվերջ խորհրդարանին կներկայացնի 2018 թվականի պետբյուջեի նախագծի վերջնական տարբերակը:***

Խորհրդարանի լիագումար նիստում երկրի ֆինանսների նախարար Դմիտրի Քումսիշվիլու կողմից ներկայացված պետբյուջեի նախագիծը, սկզբնական տարբերակի համեմատությամբ, նախատեսում է բյուջետային պակասորդի նվազեցում՝ 1,6-ից մինչեւ 1,4 տոկոս: Պետբյուջեի մուտքերը ծրագրված է 12 միլիարդ 393 միլիոն լարիի չափով, ինչը 95,0 միլիոնով գերազանցում է նախնական տարբերակի համապատասխան ցուցանիշը: Պետբյուջեի փոխանցումները, նախնական տարբերակի համեմատ, ավելացվում են 38,8 միլիոն լարիով եւ հասնում՝ 12 միլիարդ 403 միլիոն 300 հազար լարիի: Այդ գումարից 10 միլիարդ 905 միլիոն 300 հազար լարին բյուջետային միջոցներ են, 165 միլիոնը՝ դրամաշնորհներ, իսկ 1 միլիարդ 288 միլիոն լարին՝ վարկեր:

Պետբյուջեի հանրագումարային ծախսերն ավելացվել են 27,6 միլիոն լարիով եւ կազմել 9 միլիարդ 532 միլիոն լարի:

Պետբյուջեի նախագծի համաձայն, 2018 թվականին ամենաշատ ֆինանսավորում կստանան առողջապահության, տարածաշրջանային զարգացման եւ կրթության նախարարությունները:

Ներկայացնելով պետբյուջեի նախագիծը՝ ֆինանսների նախարար Դմիտրի Քումսիշվիլին հայտարարեց, որ կենսաթոշակը 20 լարիով կավելացվի 2019 եւ 2020 թվականներին:

- Ցանկանում եմ կարեւոր հայտարարություն անել կենսաթոշակների, այդ թվում՝ կենսակոթաշների ինդեքսացիայի կապակցությամբ: Մոտ ժամանակներում խորհրդարանին կներկայացվի կենսաթոշակային բարեփոխման օրինանախագիծը: Այդ պատճառով, մենք միտված ենք, որ օրենքում լինի բազային կենսաթոշակի ինդեքսացիայի մասին գրանցում: Սակայն, մինչեւ մենք կքննարկենք ինդեքսացման գրանցման հարցը, ցանկանում եմ նշել, որ արդեն ընդունել ենք որոշում, եւ այդ որոշումը ներկայացվել է խորհրդարանին՝ բյուջետային ծախսերի բաժնում, երբ ներկայացրել էինք միջժամկետային բյուջեն, ըստ որի, 2019 եւ 2020 թվականներին կենսաթոշակը ինդեքսացիայի մեթոդով կավելացվի 20 լարիով,- հայտարարեց ֆինանսների նախարարը:

Նրա խոսքով, կառավարությունը չշահարկեց կենսաթոշակների ավելացման թեման:

- Չնայած, որ վերջերս անցկացվեցին տեղական ինքնակառավարման ընտրություններ, մենք այդ թեման չշահարկեցինք, թեպետ արդեն այն ժամանակ գիտեինք, որ կենսաթոշակը 2019 եւ 2020 թվականներին ավելացվելու է: Մենք սին խոստումներ չենք տալիս: Եթե խոստանում ենք, ապա խոստումը կատարում ենք: Մենք կենսաթոշակը կավելացնենք 2019 եւ 2020 թվականներին, ինչը, նույնպես նշանակալի բարեփոխում է, ինչի իրականացման համար մեզ պետք է ձեր աջակցությունը,- խորհրդարանականներին դիմելով ասաց Դիմիտրի Քումսիշվիլին:

# 2018 ԹՎԱԿԱՆԻՑ ԿՆԵՐԴՐՎԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

***2018 թվականից Վրաստանի կառավարությունը սկսում է կենսաթոշակային բարեփոխումն, ինչը նախատեսում է կուտակումային համակարգի ներդնում:***

Բարեփոխման նախագծի համաձայն, մինչեւ 40 տարեկան Վրաստանի աշխատազբաղ բոլոր քաղաքացիները, այսինքն՝ շուրջ 500 000 մարդ, կենսաթոշակային հիմնադրամ են փոխանցելու հարկադրված աշխատավարձի գումարի 2 տոկոսը, նրանց հաշվի վրա գումարի 2 տոկոսի չափով էլ փոխանցելու է գործատուն, եւս 2 տոկոս՝ պետությունը: Այսինքն, յուրաքանչյուր քաղաքացի ապագա կենսաթոշակի հաշվին առանձնացնում է աշխատավարձի 6 տոկոսի չափ գումար:

Վիճակագրության համաձայն, ծերությունը համարվում է ապահովված, եթե կենսաթոշակի չափը հասնում է աշխատավարձի առնվազն կեսին: Կենսաթոշակային հիմնադրամը ծրագրում է այդ նշագիծը հասցնել առնվազն 30 տոկոսի:

Համեմատության համար նշենք, որ ներկայիս 180 լարի կենսաթոշակը կազմում է միջին աշխատավարձի 18 տոկոսը:

Նախագծի հեղինակների կարծիքով, կան նաեւ այնպիսի քաղաքացիներ, ովքեր իրենք են որոշելու նախագծին ներգրավվելու հարցը: Օրինակ, աշխատող, 40-ն անց, ինչպես նաեւ ինքնագործունեությամբ զբաղվողները, ովքեր կարող են փաստավորել իրենց ստացած եկամուտը: Թեպետ կան նաեւ այնպիսիք, ովքեր, ցանկության դեպքում էլ չեն կարող կուտակման համար առանձնացնել գումար: Մասնավորապես, պետությունը չի կարող հաշվարկել փոքր ֆերմերների, տաքսու վարորդների կամ արհեստավորների եկամուտները եւ ստիպված նրանց մերժելու է կուտակային համակարգին մասնակցության հարցում:

# ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

***Վրաստանի բիզնես-ասոցիացիան երկրի իշխանություններին կենսաթոշակային բարեփոխման հարցով ներկայացրել է յոթ դիտողություն:***

Նոյեմբերի 7-ին բիզնես-ասոցիացիայի անդամները հանդիպում ունեցան Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման փոխնախարար Նինո Ջավախաձեի, ֆինանսների փոխնախարար Նիկոլոզ Գագուայի եւ Ազգային բանկի փոխնախագահ Արչիլ Մեստվիրիշվիլու հետ: Հանդիպման նպատակը կենսաթոշակային բարեփոխման շրջանակներում ծրագրված միջոցառումների հարցի քննարկումն էր: Հանդիպումն անցկացվեց դռնփակ:

Հանդիպման ավարտից հետո, բիզնես ասոցիացիայի անդամ, «Վիսսոլի գրուպի» նախագահ Սոսո Փխակաձեն հայտարարեց, որ իշխանությունները պատրաստ են հաշվի առնել ասոցիացիայի ներկայացրած դիտողությյունները:

- Մեր կողմից դիտողություններ արվեցին այն կապակցությամբ, թե ինչպես են նշանակվելու ներդրումային խորհրդի անդամները, ինչպես են տնօրինելու գումարներով եւ այլն: Անկեղծորեն կասեմ, որ ռիսկը նրանում է, որ այդ բարեփոխումը չի անցկացվի: Այդ բարեփոխումը պետք է իրականացվի,- ընդգծեց Սոսո Փխակաձեն:

Անդրադառնալով այն հարցին, թե հիմնադրամը ինչպես է տնօրինելու կուտակված միջոցները, Փխակաձեն հայտարարեց, որ հիմնական ներդրումները կիրականացվեն երկրի ներսում, իսկ ներդրումային քաղաքականությունը սահմանելու է ներդրումային խորհուրդը:

Խոսելով այն գումարի մասին, որը վճարելու է բիզնեսը, Փխակաձեն նշեց, որ դա սոցիալական պատասխանատվությունն է, այն հարկադրման ենթակա չէ եւ արդյունքում կազմում է 1,6 տոկոս:

